



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ձ**

**Գ Յ Ո Ւ Մ Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի**

**«15» հունիսի 2021 թվական**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 10/5**

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն**

**Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ձ Ի Գ Յ Ո Ւ Մ Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի**

**Ա Վ Ա Գ Ա Ն Ո Ւ Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ Ն Ս Տ Ա Շ Ր Ջ Ա Ն Ի**

**Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Ն Ի Ս Տ Ի**

**Ն Ի Ս Ն Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Մ Է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բաղայանը:  
Ն Ի Ս Տ Ի Ն Մ Ա Ս Ն Ա Կ Ց Ո Ւ Մ Ե Ն Գյումրի համայնքի ավագանու թվով 18 (տասնութ) անդամներ՝**

Ս.Բալասանյանը, Ա.Ադամյան, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյան, Վ.Եղիգարյանը, Ա.Գրիգորյանը, Վ.Հունանյանը, Կ.Միքայելյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ս.Աստոյանը, Հ.Եղիազարյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Մաթևոսյանը, Հ.Պողոսյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բաղայանը:

**Լ Ս Ե Ց Ի Ն.**

**1. Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ձ Ի Գ Յ Ո Ւ Մ Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ո Ւ Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ Ն Ս Տ Ա Շ Ր Ջ Ա Ն Ի Հ Ե Ր Թ Ա Կ Ա Ն Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Ն Ի Ս Տ Ի Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը Հ Ա Ս Ա Տ Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն**

**(Ձեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)**

**Ք Վ Ե Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**կողմ – 17**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

**Որոշումն ընդունվեց**

**Լ Ս Ե Ց Ի Ն.**

**2. Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ձ Ի Գ Յ Ո Ւ Մ Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ո Ւ 2020 Թ Վ Ա Կ Ա Ն Ի Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր Ի 24-Ի N 223-Ն Ո Ր Ո Շ Մ Ա Ն Մ Ե Ջ Փ Ո Փ Ո Խ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Կ Ա Տ Ա Ր Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն**

**(Ձեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**Ք Վ Ե Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**կողմ – 17**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 223-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «5 331 014 618 (հինգ միլիարդ երեք հարյուր երեսունմեկ միլիոն տասնչորս հազար վեց հարյուր տասնութ)» թիվը և բառերը փոխարինել «5 429 162 818 (հինգ միլիարդ չորս հարյուր քսանինը միլիոն մեկ հարյուր վաթսուներկու հազար ութ հարյուր տասնութ)» թիվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «6 085 956 518 (վեց միլիարդ ութսունհինգ միլիոն ինը հարյուր հիսունվեց հազար հինգ հարյուր տասնութ)» թիվը և բառերը փոխարինել «6 184 104 718 (վեց միլիարդ մեկ հարյուր ութսունչորս միլիոն մեկ հարյուր չորս հազար յոթ հարյուր տասնութ)» թիվով և բառերով:

2. Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2,3,4 հավելվածների:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 5(ՀԻՆԳ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

Գյումրի համայնքի ավագանու անդամ Ա.Ադամյանը քվեարկությանը մասնակցեցին օրակարգի 3-րդ հարցից:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թիվ 5 (հինգ) համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին տեղեկատվական թերթիկներ տպագրելու համար որպես նվիրատվություն հատկացնել 570 000 (հինգ հարյուր յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/2/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 4(ԶՈՐՍ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Կազմակերպություններին ընթացիկ վերանորոգման համար որպես նվիրատվություն հատկացնել 5 817 000 (հինգ միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/1/1, 8/2/1, 8/2/2, 8/2/3 գործառական դասակարգումների (ըստ հավելվածի) (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄՇԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Կազմակերպությանը ընթացից վերանորոգման համար որպես նվիրատվություն հատկացնել 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/2/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրեն Շողիկ Մելքոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ - ԹԱՆԳԱՐԱՆ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 2 027 000 (երկու միլիոն քսանյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որից՝

1) 1 530 000 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» գրքի տպագրման ծախսերը հոգալու նպատակով,

2) 497 000 (չորս հարյուր ինսունյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ արևային էլեկտրոկայան տեղադրելու նպատակով:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021թվականի բյուջեի 8/4/2, իսկ 2-րդ ենթակետում նշվածը՝ 8/2/2 գործառական դասակարգումների (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրեն Արա Պապանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 5 (ՀԻՆԳ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 23**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի հաշվեկշռում առկա թվով 380 (երեք հարյուր ութսուն) աթոռները որպես նվիրաբերություն հանձնել թվով 5 (հինգ) կազմակերպություններին՝ համաձայն հավելվածի:

2. Գույքի հանձնման-ընդունման գործընթացի կազմակերպումը և դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը վերապահել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտով ստեղծվելիք հանձնաժողովին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հատկացնել 3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ավարտական խմբերի և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ ձեռք բերելու նպատակով :

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ - գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4261) «Գրասենյակային նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**ԼՍԵՑԻՆ.**

**9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ» ԱՄԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ -18

դեմ - 0

ձեռնպահ -0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու օր» ամենամյա տոնակատարությանը նվիրված միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով հատկացնել 5 000 000 (հինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ - գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) «Այլ ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**10. 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ, ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱԿԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ -18

դեմ - 0

ձեռնպահ -0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1.2020 թվականի ընթացքում աշխարհի, Եվրոպայի և Հայաստանի Հանրապետության առաջնություններում չեմպիոններ և մրցանակակիրներ պատրաստած գյումրեցի մարզիկների մարզիչներին շնորհել դրամական պարգևներ՝ 5 528 000 (հինգ միլիոն հինգ հարյուր քսանույթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գումարից 2 764 000 (երկու միլիոն յոթ հարյուր վաթսուներորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամի վճարումը կատարել 2021 թվականի հուլիս ամսին, իսկ մնացած 2 764 000 (երկու միլիոն յոթ հարյուր վաթսուներորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամի վճարումը կատարել 2021 թվականի դեկտեմբեր ամսին,

2) սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**11.2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՉԵՄՊԻՈՆ ԴԱՐՁԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. 2021 թվականի ընթացքում աշխարհի և Եվրոպայի առաջնություններում չեմպիոն դարձած գյումրեցի մարզիկներին և նրանց մարզիչներին շնորհել դրամական պարգևներ 7 050 000 (յոթ միլիոն հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 163 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆԵՐԵՔ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Թվով 163 (մեկ հարյուր վաթսուներեք) անձանց որպես դրամական օգնություն կանխիկ հատկացնել 2 160 000 (երկու միլիոն հարյուր վաթսուին հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**13. «ԿՈՄՊԱՍՍ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 17**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 1 (Հ.Եղիազարյան)**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 500 000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ «Նորարար բջջային հավելված՝ հանուն քաղաքացիների ներգրավվածության ու ՏԻՄ կառավարման բարելավման Գյումրիում» ծրագրի իրականացման նպատակով:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության նախագահ Ղարիբ Հարությունյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**14. «ԿԱԶԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամին որպես նվիրատվություն հատկացնել 158 600 (մեկ հարյուր հիսունութ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, «Հայաստանի երիտասարդ քաղաքացիներ, երիտասարդների հզորացում քաղաքացիական կրթության և սոցիալական նորարարության միջոցով» ծրագրի իրականացման նպատակով:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 6 (ՎԵՑ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Կազմակերպություններին աշխատակիցների մայիս ամսվա աշխատավարձը և աշխատավարձից պահված հարկերը ամբողջությամբ վճարելու համար որպես նվիրատվություն հատկացնել 2 713 700 (երկու միլիոն յոթ հարյուր տասներեք հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/2/3 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՅԱԶԴ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓՈԽԸՄԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Վավերացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի և Իրանի Իսլամական Հանրապետության Յազդ քաղաքների միջև 2021 թվականի մարտի 16-ին վիրտուալ (առցանց եղանակով) ստորագրված փոխըմբռնման հուշագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 202-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Ս.ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 169-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի N 202-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 202-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 2-րդ կետով հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հուլիսի 01-ից:

**Որոշումն ընդունվեց**



**ԼՍԵՑԻՆ.**

**18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ Ա. ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 4 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրիի Ա.Բրուտյանի անվան N 4 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի վերանորոգման և արդիականացման նպատակով հատկացնել 20 000 000 (քսան միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՂԱՐՍԻ ԽՃՈՒԴԻ N 20 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ «ՏԻԳՐԱՆ ԱՔԳԱՐՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ» ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ պետական գրանցման վկայական N 04052021-08-0055) Ղարսի խճուղի N 20 հասցեի 1 (մեկ) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը 10 (տասը) տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել «Տիգրան Աբգարյան մարտական պատրաստության ակումբ» հայրենասիրական հասարակական կազմակերպությանը՝ մարտավարատեխնիկական աշխատանքների գործնական դասընթացների ու միջոցառումների կազմակերպման ու անցկացման նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Տիգրան Աբգարյան մարտական պատրաստության ակումբ» հայրենասիրական հասարակական կազմակերպությանը պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ N 3 «ՇԻՐԱԿ» ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի N 3 «Շիրակ» գերեզմանատան ընդլայնման և նոր գերեզմանատան կազմակերպման նպատակով հողամաս ձեռք բերելու համար հատկացնել ֆինանսական միջոցներ՝ 4 200 000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/2/7 գործառական դասակարգման (5411) «Հող» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**  
**ԼՍԵՑԻՆ.**

**21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 3/8 ՀԱՍՑԵԻ 16.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**  
**(Ձեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Քաղաքացի Հայաստան Մուկուչի Պողոսյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոցի N 3/3 հասցեի 74.4 (յոթանասունչորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տանը հարակից, Սունդուկյան փողոցի N 3/8 հասցեի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 04052021-08-0012), կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 16.9 (տասնվեց ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ բնակելի տան ընդլայնման նպատակով:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի՝ մինչև 2021 թվականի հունվարի 01-ը գործող կադաստրային արժեքով, որը կազմում է 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 49686 (քառասունինը հազար վեց հարյուր ութսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հայաստան Մուկուչի Պողոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**  
**ԼՍԵՑԻՆ.**

**22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ N 104/2 ՀԱՍՑԵԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ 49.42 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Քաղաքացի Հակոբ Վարանցովի Վարոյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Գորկու փողոցի N 104/2 հասցեի օժանդակ շինության պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 49.42 (քառասունինն ամբողջ քառասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 519602 (հինգ հարյուր տասնինը հազար վեց հարյուր երկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում լիազորված անձին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ N 95 ՀԱՍՑԵՈՎ «ԼՈՒՌՈՒԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱԴԵՑՐԱԾ 220.99 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. «Լուռուա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականություն իրավունքով իրեն պատկանող Աղայան փողոց N 95 հասցեով վարչական շենքի պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 220.99 (երկու հարյուր քսան ամբողջ իննսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) դրամ 1,0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 981637 (ինը հարյուր ութսունմեկ հազար վեց հարյուր երեսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Նորայր Սաֆարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ N 4/9 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 14062021-089-0022) Ղարսի խճուղի N 4/9 հասցեի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ

հարյուրերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0247-0008) մրցույթով կառուցապատման իրավունքով 30 (երեսուն) տարի ժամկետով՝ տրամադրել առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 250000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ N 6/8 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին պատկանող Ղարսի խճուղի N 6/8 հասցեի 0,223918 (զրո ամբողջ երկու հարյուր քսաներեք հազար ինը հարյուր տասնութ միլիոներորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը մրցույթով կառուցապատման իրավունքով 30 (երեսուն) տարի ժամկետով՝ տրամադրել օգտագործման՝ բարեկարգման, կանաչապատման նպատակով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 160000 (մեկ հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼՍԵՑԻՆ.**

**26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՓՈՂՈՑ N 2/4 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 01062021-08-0051) Մուշ-2 թաղամաս 1-ին փողոց N 2/4 հասցեի 0,014 (զրո ամբողջ տասնչորս հազարերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0124-0016) մրցույթով կառուցապատման իրավունքով 5 (հինգ) տարի ժամկետով՝ տրամադրել օգտագործման՝ բարեկարգման, կանաչապատման նպատակով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 80000 (ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց  
ԼՍԵՑԻՆ.**

**27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 77/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26052021-08-0014) Շիրակացու փողոց N 77/1 հասցեի 0,021 (զրո ամբողջ քսանմեկ հազարերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0628-0144) մրցույթով կառուցապատման իրավունքով 15 (տասնհինգ) տարի ժամկետով տրամադրել օգտագործման՝ բարեկարգման, կանաչապատման նպատակով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 120000 (մեկ հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ N 7/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 18**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

